Մ. Գարեգյանին
ուղարկվում է կատարման
16.11.2017թ. Մ. Մարտիրոսյան

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի
Քարտուղարության ղեկավար
Պարոն Տիգրան Մարտիրոսյանին

ՏԵՂԵԿԱՆՔ

Հարգելի պարոն Մարտիրոսյան,

Տեղեկացնում եմ, որ 2017թ. նոյեմբերի 1-ից 3-ը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցի կողմից համատեղ իրականացվող «Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքը» խորագրով կոնֆերանսին մասնակցելու նպատակով պաշտոնական այցով Հայաստանի Հանրապետությունում են գտնվել Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարության հարցերով գլխավոր տնօրինության գլխավոր տնօրեն Սնեժանա Սամարջիչ-Մարկովիչը, Խորվաթիայի երեխաների պաշտպան Իվանա Միլաս Կլարիչը, Մալթայի երեխաների հանձնակատար Պոլին Միչելին և հանձնակատարի խորհրդական Գլեն Գաուչին, ինչպես նաև Ղրզստանի օմբուդսմանի տեղակալ Գուլնարա Ժամգըրչիեվան:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից անհրաժեշտություն է առաջացել վերջիններիս ժամանումն ու մեկնումը իրականացնել «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի պաշտոնական պատվիրակությունների և VIP նոր կոմերցիոն սրահում՝ ձեռք բերելով 30.000 ՀՀ դրամ արժողությամբ ծառայություններ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի
օգնական

Ջուլիետա Բաղդասարյան
16.11.2017